

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ (1924 Թ.)

Ն. Գ. ԶԱՎԱԽԻՇՎԻԼԻ (Թբիլիսի)

Անդրկովկասի ֆինանսական միասնականության հաստատման առաջին փորձը կատարվեց 1918 թվականի սկզբներին, երբ շրջանառության մեջ դրվեցին Անդրկովկասյան կոմիսարիատի բռները, որոնք մինչև 1919 թվականի հուլիսը տպագրվում էին Թբիլիսիում՝ Անդրկովկասի հանրապետությունների միջև ձեռքբերված համաձայնագրի հիման վրա¹:

Գրեթե քառամյա (1919-1922) ընդմիջումից հետո կատարվեց Անդրկովկասի ֆինանսական միասնականության հաստատման երկրորդ փորձը:

Անդրկովկասի դաշնային տարադրամի ընդունման նախաձեռնողները գտնում էին, որ այդ քայլը կնպաստի Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի տնտեսության վերածննդին, հետևաբար և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

1922 թվականի եզրագծին «Կոմունիստի» թերթը հրապարակեց Վրաստանի կոմունիստական կուսակցության Թբիլիսիի կոմիտեի թեզիսները Անդրկովկասի ֆինանսատնտեսական իրավիճակի մասին, ուր մասնավորապես ասված էր. «Անդրկովկասի դաշնության տարածքում կհաստատվի ֆինանսական միասնական համակարգ, անհամաձայնեցված և չհամակարգված ծախսերի փոխարեն կհաստատվի Անդրկովկասյան հանրապետությունների ամբողջական բյուջե և միասնական էմիսիոն կենտրոն... Միասնական հարկային քաղաքականության ներդրմամբ հնարավորություն կստեղծվի առանձին հանրապետությունների և նետուրսների և միավորված հիմնադրամների նպատակամղված կիրառման»²:

1923 թվականի հունվարի 10-ին Անդրկովկասի Խորհրդային դաշնային Սոցիալիստական Հանրապետության միութենական խորհուրդն ընդունեց դեկրետ դաշնային տարադրամը շրջանառության մեջ դնելու մասին³: 1923-1924 թվականներին շրջանառության մեջ դրվեցին 18 անուն տարբեր արժողության բռների թղթադրամներ՝ 1.000-ից մինչև 10 միլիոն ուրլի արժողությամբ:

Անդրկովկասի դաշնային ուրլու համար հիմք ընդունվեց Վրաստանի ուրլու կուրսը, քանզի վրացական 1 ուրլին այն ժամանակ համարժեք էր ադրբեջանական 100 և հայկական 150 ուրլուն⁴:

Դաշնային տարադրամը տպագրվում էր Թբիլիսիի Ազատության հրապարակի վրա գտնվող Կովկասյան բանակի օկրուգային շտաբի նախկին շենքում տեղակայված դրամահատման առաքարածնում: Առավել բարձրարժեք դրամանիշերը տպագրվում էին Մոսկվայում:

Անդրկովկասի հանրապետությունների ֆինանսական միասնականության հաստատումն առանձնապես չնպաստեց դաշնության կազմում ընդգրկված երկրների տրնտեսական վերածննդին: Ընդհակառակը, աստիճանաբար խորացավ ֆինանսատնտեսական ճգնաժամը, արժեզրկումը վերանեց գերարժեզրկման, իսկ գների աճն ընդունեց

¹ Տե՛ս Ն. Զավախիշվիլի, Վրացական բռնիստիկա, (վրաց.), Թբիլիսի, 1996, էջ 12-35:

² «Կոմունիստ», թերթ, Թբիլիսի, 1922, 17 դեկտեմբերի:

³ Տե՛ս «Տրիբունա», թերթ, Թբիլիսի, 1923, 11 հունվարի:

⁴ Տե՛ս Վրաստանի նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ, ֆոնդ 612, ցուցակ 1, գործ 142, թերթ 2:

քառասային բնույթ: Օրինակ, եթե 1923 թվականի մարտի 31-ին Թբիլիսիի արժութային քուրսայում ցարական Ռուսաստանի ոսկե տասանոցն արժեր 6 միլիոն 400 հազար, անգլիական ֆունտ ստերլինգը՝ 3 միլիոն 800 հազար, ԱՄՆ-ի դոլարը՝ 820 հազար, իսկ թուրքական լիրան՝ 650 հազար դաշնային ռուբլի⁵, ապա ընդամենը 17 օր հետո՝ ապրիլի 17-ին, նույն տասանոցի արժեքը հասավ 11 միլիոնի, անգլիական ֆունտ ստերլինգը՝ 5 միլիոն 800 հազարի, դոլարինը՝ 1 միլիոն 350 հազարի, իսկ լիրայի արժեքը կազմեց 1 միլիոն 55 հազար ռուբլի⁶: Ավելին, դաշնային տարադրամի կուրսի անկման գործընթացը ոչ միայն չդադարեց, այլև գնալով այնքան ուժեղացավ, որ հաջորդ տարվա սկզբներին վերածեց գերարժեզրկման: Դրանում համոզվելու համար բավական է ասել, որ եթե 1924 թվականի հունվարի 2-ին ռուսական 1 չեքվոնեցն արժեր 125 միլիոն Անդրկովկասյան ռուբլի, ապա նույն տարվա ապրիլի 14-ին դրա արժեքը հասավ 465 միլիոնի⁷:

Գրեթե նույնանման իրավիճակ տիրում էր ոչ միայն հետամնաց կամ թույլ զարգացած երկրներում, այլև արդյունաբերապես հզոր պետություններում: Օրինակ, որքան էլ զարմանալի է, փողի կուրսի անկման չափերով Գերմանիան գերազանցեց բոլոր երկրներին:

Նման իրավիճակից դուրս գալու ելքն Անդրկովկասի դաշնության ղեկավարները տեսնում էին, անշուշտ, ԽՍՀՄ կենտրոնական իշխանության թելադրանքով, դաշնային դրամը միութենական միասնական դրամով փոխարինելու մեջ: Ըստ այդմ, 1924 թվականի փետրվարի 18-ին Անդրկովկասի դաշնության կենտրոնական կոմիտեն և ժողովրդական կոմիսարների խորհուրդն ընդունեցին որոշում «Անդրկովկասի ԽՍՀ-ի տարածքում ԽՍՀՄ պետական գանձատան տոմսերի պարտադիր գործառնության մասին»⁸:

Անդրկովկասի դաշնային կառավարությունը ֆինանսական բարեփոխումների քարոզչությունը ծավալեց մամուլի միջոցով:

«Կոմունիստի» թերթում հրապարակված «Դրամական բարեփոխումները Անդրկովկասում» հոդվածում հիմնավորվում էր այն գաղափարը, որ դաշնային տարադրամի փոխարինումը միութենական համընդհանուր տարադրամով պատմական անհրաժեշտություն է⁹: Իսկ «Դրամական բարեփոխումների շուրջը» նամակում, որը «Կոմունիստի» թերթը հրապարակեց երեք բաժնով, կառավարությունը ժողովրդին հավաստիացնում էր, որ ֆինանսական բարեփոխումների նպատակը դաշնային արժեզրկված տարադրամի փոխարինումն է հաստատուն կուրս ունեցող ԽՍՀՄ միասնական տարադրամով¹⁰:

Միութենական կառավարության հանձնարարությամբ Անդրկովկասի կառավարությունը դրամական բարեփոխումները սկսեց 1924 թվականի ապրիլի 4-ին ընդունած ղեկընտոյ: Դաշնային դրամահիշերի տպագրությունը դադարեցվեց ապրիլի 14-ից, իսկ դրանց թողարկումը՝ ապրիլի 15-ից: Սկսվեց Անդրկովկասյան դաշնային տարադրամի փոխանակումը չեքվոնեցի հետ: Մեկ չեքվոնեցը փոխանակվում էր 125 միլիոն անդրկովկասյան ռուբլով:

Որոշվեց դաշնային դրամահիշերի շրջանառությունը դադարեցնել 1924 թվականի հունիսի 15-ին, իսկ դրա փոխարկումը՝ հունիսի 30-ին: Հետագայում այս ժամկետները փոխվեցին, համապատասխանաբար՝ հունիսի 30 և հուլիսի 31: Ընդհանուր առմամբ փոխանակվեց 1 միլիոն 216.188 ընդհանուր միութենական ռուբլուն համարժեք անդրկովկասյան դաշնային ռուբլի: Դրամական բարեփոխումներից առաջ Անդրկովկասում

⁵ Տե՛ս «Կոմունիստի», թերթ, Թբիլիսի, 1923, 1 ապրիլի:

⁶ Տե՛ս նույն տեղը, 18 ապրիլի:

⁷ Տե՛ս Յուրի Կաճարավա, Վրաստանում խորհրդային ազգային պետականության կազմավորումը և ժողովրդական տնտեսության վերականգնումը (1921 – 1925 թթ.), «Ակնարկներ Վրաստանի պատմության» (վրաց.), հ. 8, Թբիլիսի, 1976, էջ 169:

⁸ «Կոմունիստի», թերթ, Թբիլիսի, 1924, 20 փետրվարի:

⁹ Տե՛ս նույն տեղը, 5 ապրիլի:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, 6, 8, 9 ապրիլի:

շրջանառության մեջ էր գտնվում ընդամենը 16.183.952.656.345.000 դաշնային ռուբլի¹¹: Վրաստանում փոխանակվեց այդ գումարի 66,7 տոկոսը կամ 811.294 ռուբլի, Ադրբեյջանում՝ 28,8 տոկոսը կամ 349,959 ռուբլի, իսկ Հայաստանում՝ 4,5 տոկոսը կամ 54.935 ռուբլի¹²:

1924 թվականի հուլիսի մեկից Անդրկովկասում միանշանակ սկսեց իշխել խՍՀՄ-ի դրամանիշը, որը մինչև 1992 թվականը վճարման միակ օրինական միջոցն էր Ադրբեյջանում, իսկ մինչև 1993 թվականը՝ Հայաստանում և Վրաստանում:

Ելնելով այս ամենից, կարծում եմ, իրավունք ունենք եզրակացնելու, որ Անդրկովկասի դաշնային միասնական ֆինանսական համակարգի վերացման հիմնական պատճառը ոչ թե դաշնային տարադրամի արժեզրկումն էր, ինչպես փորձում էին հիմնավորել այն ժամանակ, այլ խՍՀՄ հսկայածավալ կայսրության ողջ տարածքում միութենական միասնական դրամական համակարգի հաստատումը:

Н. Г. ДЖАВАХИШВИЛИ (Тбилиси) - Причины ликвидации унифицированной финансовой системы Закавказья (1924 г.). - Вторичная попытка финансовой унификации Закавказья была предпринята в начале 1923 года. Ее инициаторы считали, что этот шаг положительно повлияет на возрождение экономики всех республик Закавказья, а также на повышение жизненного уровня в них.

10 января 1923 года на заседании совета союза Закавказских Советских Федеративных республик был принят декрет о введении в оборот единой федеральной валюты.

Возобновленная финансовая унификация Закавказья не смогла позитивно повлиять на возрождение экономики входящих в Федерацию государств. Вышло наоборот: постепенно углубился финансово-экономический кризис и инфляция переродилась в гиперинфляцию.

В апреле 1924 года в Закавказье началась финансовая реформа. Оборот единой федеральной валюты прекратился 30 июня. Место федеральной валюты заняла единая валюта Советского Союза.

Главной причиной аннулирования единой финансовой системы Закавказья, вместе с девальвацией федеральной валюты, была позиция Закавказской СФСР, связанная с переходом на единую денежную систему СССР, которая была продиктована из Москвы.

¹¹ Տե՛ս **А. И. Васюков, В. В. Горшков, В. И. Колесников, М. М. Чистяков, Бумажные денежные знаки России и СССР, СПб, 1993, էջ 54-55:**

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 5: